ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

02 » մայիսի 2019 թվականի N: 147-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշմամբ սահմանված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման ծրագրի 3-րդ կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2019 թվականի փետրվարի 4-ի №21-Ա որոշմամբ հաստատված արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանի 13-րդ կետի 1-ին ենթակետի՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2019 թվականի մայիսի 21-ին անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման կազմակերպումը» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Ալեքսան Գյոզալյանին:

3. Հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն №1 հավելվածի,

2) ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն №2 հավելվածի:

4. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը,

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը,

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը,

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը,

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը,

8) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը,

9) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Գյումրու օդերևութաբանական կայանը,

10) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը,

11) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածքային տնօրինության «Շիրակ» տեղամասը,

12) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը,

13) «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Գյումրու գծային կայարանների միավորումը,

14) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանը:

5. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) մինչև 2019 թվականի մայիսի 10-ը ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

2) ուսումնավարժության մասնակիցներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն,

3) 2019 թվականի մայիսի 17-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել ուսումնավարժության պլանով նախատեսված միջոցառումները,

2) պատրաստ լինել ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին ներկայացնելու համապատասխան զեկույցներ:

7.Շտաբային ուսումնավարժության ղեկավարումը և սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի մայիսի 02-ի №147-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Մարտին Մկոյան	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, շտաբային ուսումնավարժության խաղարկման խմբի ղեկավար.
2. Կարեն Եղշատյան	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ապահովման հարցերով պետի տեղակալ, շտաբային ուսումնավարժության վերլուծման և ամփոփման նախապատրաստման խմբի ղեկավար.
3. Ռուսլան Հարությունյան	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, շտաբային ուսումնավարժության խաղարկման խմբի անդամ.
4. Գոռ Ավետիսյան	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, շտաբային ուսումնավարժության վերլուծման և ամփոփման նախապատրաստման խմբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի մայիսի 02-ի №147-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

Հ/Հ	ՈՒսումնավարժությունում ընդգրկված մասնակիցները	Միջնորդներ	
		ազգանուն, անուն	պաշտոնը
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը, «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Գյումրու գծային կայարանների միավորումը:	Գրիգորյան Սուրեն	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ,խմբի անդամ:
2.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանը:	Հակոբյան Յուրիկ	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ:

3.	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման եվ կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը, «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածքային տնօրինության «Շիրակ» տեղամասը:	Ներսիսյան Սուսաննա	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ:
4.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Գյումրու օդերևութաբանական կայանը:	Գասպարյան Սերգեյ	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ,խմբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է